



### 33. ՄԱՐԴԻՍ ՓՈՂԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՏՎՈՒՄ

Մի թաքավոր արդեն շատ էր ծերացել. կանչեց իր որդուն ու խրատեց իր տղան, որ լավ կառավարի իր թաքավորությունը, մեռավ: Թարալորի տղան դեռ շահել էր. էդ պատճառով էլ հոր մահը շատ ներդրություն ունեցավ նրա սրտի վրա: Նա ամեն օր դնում էր հոր դերևիմանի վրա լաց լինում: Սորանից փոքր ինչ հեռու մի քանի լոթի-փոթիք լավ քնք էին անում: Այս նկատելով իրար մեջ խորհուրդ արին, որ վերադառնալիս նրան կանչեն իրանց մոտ, դիտահան անեն ու նրա հոր փողերը վատեն: Թաքավորի տղան լաց ընկելուց հետո ուղում էր հետ գնա տուն, բայց ճանապարհին այն լոթիքը դռով տարան իրանց մոտ նստացրին ու խմացրին. սկսեցին նրան խրատել, թե իդուր իչո՞ւ է իրան վնասում, իր շահել կյանքը տխրության մեջ անցկացնում. մեռավ՝ մեռավ, ի՞նչ պետք է անել. ամեն մարդ էլ մեռնելու է. իրանք էլ շատ են ցավում, իրանց որդու պես էր սիրում, մսխելու փող էր տալիս, բայց տրտմելով ի՞նչ կդառնա: Մի խոսքով էնքան քարոզ կարդացին նրա գլխին, որ նա դիտահան էլավ: Իր հոր ունեցած շունեցածը բերեց նրանց հետ վատնեց: Նորա մայրը շատ էր խրատում, համա թե պատին ասած, թե նորան. դուխը դադ չէր մտնում, մինչև որ, հետին աղքատության մեջ ընկան. էլ վատնելու ոչինչ չմնաց:

Մի անգամ էս լոթիքը մի տեղ քեֆ էին անում: Սա այդ իմա-

ցավ ու մորը ասեց, որ մի հավ մորթի, խաշի ու մի գավ գինի էլ հետը առած գնաց նրանց մոտ: Դարվազի գուռը կողպած էր. նա գինին ու հավը գետնին գրեց ու ինքը նի էլավ, որ գարվազին բաց անի: Էս բանից մի շուն օգուտ քաղելով հրվեց նրա հավը ու տարավ: Նա շատ «Թուլա՛, թուլա՛» արեց, բայց ո՛ր, տարավ, անուշ արեց: Ինչ պտի աներ. գինին առած գնաց ընկերների մոտ. պատմեց այս պտահած գժբախտությունը:

Ընկերները նրան շհավատացին ու դուրս արին ասելով.— Մի գավ գինի ես բերել, ուզում ես մեզ հետ քեֆ անել. մենք ինչքա՛ն փող ենք մսխել, սուտ ասում ես, թե հավը շունը տարել է, էդ հավատալու բա՛ն է:

Նա փոր ու փողման եդ դառավ տուն ու պատմեց մորը, որ ընկերները շունդունեցին իրան: Մերը ասեց, թե ինչո՛ւ առաջ իր խոսքին չլսեց ու շհեռացավ նրանցից. քանի փող ունեք՝ կանչում էին, երբ հատավ փողը՝ էլ նրա երեսին մտիկ անող չկար: Թաքավորի տղեն նոր գլխի ընկավ, բայց ուշ էր. մոր խորհրդով մի հացթուխի մոտ մտավ, նրա թխած հացերը. ծախում էր, գլխիս ...<sup>1</sup>: Շատ հաջող էր գնում նորա առևտուրը. այնպես որ հաց թխողները սրան չէին կարողանում ծախելու հաց հասցնել. քաղաքի ամեն մարդիկը սրանից էին հաց առնում: Այնպես որ քիչ-քիչ նա վրա էկավ, քիչ-քիչ փող աշխատեց: Գողերը էս նկատեցին ու էլի նրա ղովթուխը մտան, էլի նրան գլխահան արին ասելով, թե նա թաքավորի որդի է, ամոթ չէ՞, որ հաց է ծախում: Թե նրա մայրը փող պահած կունենա, վերցնի բերի մսխեն: Նրանց խոսքերը էլի բեյինը մտավ. գնաց մոր յախեն կպավ ու փող ուզեց: Նա երդումկրակը ընկավ, թե փող չունի պահած. հորից մնացած մի շավար կա, թե ուզում ա՛ տանի ծախի ու փողը իրեն վերցնի: Նա վեր առավ էգ շավարը ու հագավ, մորը ասելով, թե սաղո՞ւմ է իրան: Մայրը զարմացավ նրա ձենը լսելով, բայց նրան տեսնել, շոշափել չկարողացավ: Երբ նա շավարը հանեց, նորից տեսավ նորան: Այն ժամանակ հասկացավ, որ շավարի մեջ զորություն կա ու զգուշությամբ պահեց շավարը:

Որդին դարձյալ սկսեց գնալ հացթուխի մոտ հաց վաճառելու: Բայց լոթիքը էլի սրան գլխահան արին ու էլի սա կպավ մոր յա-

<sup>1</sup> Զեռագրում մի բառ անընթեռնելի է (Մ. Կ.):

խեն՝ փող ուզելու նա ասեց, թե հորից մնացել է էլի մի շվի. նա վեր առավ ու գաշտը զուրս գալով սկսեց ածել. իսկույն առջևը երեաց մի հրեղեն ձի՝ յուր ամեն պարագաներով զարդարած ու հարցրեց նրանից, թե ի՞նչ է հրամայում: Նա ասաց, թե ոչինչ չունի ասելու. շատ վախտ է, հոր ձիուն կարոտել էր, ուզում էր տեսնել: Ձին էլի աներևութացավ: Նա այն շվին էլ զգուշությամբ պահեց հոր շավարի հետ միասին: Դարձյալ դնում էր հաց թխողի մոտ: Լոթիբը էլի նրա յախեն կտան, նրան գլխահան արին: Նա էլի մուշանին դնուց ու փող ուղեց: Մերը այս անգամ տվեց հորից մնացած մի րսակ, վերցնելով գնաց էլի հաց թխողի մոտ ու ինչքան հաց էր ծախվում, փողերը ածում էր նրա մեջ: Երբ երեկոյան ուզում էր համարարի ծախած հացերից գոյացած փողը, նա զարմացավ, երբ տեսավ, որ իսկի սե փող չկա, բոլորը սիպտակել են: Նա գլխի ընկավ, որ սորա մեջ էլ մի բան կա: Գնաց մի քանի հարիք մանեթի սև փող առավ, լցրեց էս քիսի մեջ ու սիպտակ դարձրեց: Նա էսպեսով շատ հարստացավ, ինչքան փող էր կորցրել, համարյա երկու կնքան հավարեց: Նա էլ հաց թխողի մոտ շեր դնում ու իրա համար լավ ապրում էր: Գողերը էլի ուզեցին նրան մոտենալ ու մի անդամ ուտահելով հարցրին, թե ինչո՞ւ իսկի էլ չի գալի իրենց հետ քեֆ անելու: Նա ասեց, իրանք և՛ որ ասեցին ու նա դրժեց. վճուղին որ մի օր իրա մոտ գան քեֆ անելու: Նշանակած օրը էդ յոթիքը էկան թաքավորի տղի մոտ. կերան, խմեցին, լավ քեֆ արին:

Նրանցից մեկը խոսակցության ժամանակ ասեց, թե մեր տանը մուկը դուրսանի մնջիլը ծամելով կտրել է:

էսպիսի սուտը լսելով թաքավորի տղեն ասեց.— էն ընչիցն է, որ շունը հավ չի ուտի, մուկը զնջիլ կկտրի:— էս ասելով նա հրամայեց իր ծառաներին նրանց լավ ծեծեն ու դուրս անեն: էսպեսով նրանց ոտը կարվեց թաքավորի տգի տանից: Թաքավորի տղեն մի անգամ իրանց բաղում ման էր գալիս. տեսավ էրկու թզի ծառ՝ մինը սիպտակ, մինը սև: Սև թզից կերավ թե չէ, իսկույն գլխի վրա կանդնեց ու էլ չկարաց կանգնել ոտի վրա: Մորը ձեն տվեց, նա եկավ, սիպտակ թզից քաղեց, տվեց նրան կերավ ու իսկույն նըստեց: Նա ինքն իրան ասեց. «Ինձ էս էլ պետք կդա»:

Թաքավորի տղեն լսեց, որ ֆլան թաքավորի աղջկերքը շատ սիրուն են, համա ոչ ոք չի կարողանում նրանց կնիկ առնի. ով

գալիս ա նրանց մոտ, մի հարց են տալի. թե կարաց ասի՝ կպսակ-վեն, թե չէ հո սպանել կտան, նրա գլուխը կկտրեն: Նա վեր կալավ այս բոլոր բաները ու ճանապարհ ընկավ էդ թաքավորի երկիրը, գնաց նրա մոտ: Սաղ օրը քեֆ արեց նրանց հետ, ինչքան փող ունեւր վերջացրեց: Թաքավորի աղջկերքը նրան շղմշեցին սպանել ու մի մեզարի մեջ փաթթելով տարան քուչեն գցեցին: Առավոտը տեսավ, որ քուչում ընկել է: Իսկույն քաղաքից դուրս գնաց, զուռնեն փշելով՝ իսկույն ձին եկավ ու կանգնեց նրա առաջ: Նա նստեց և մի օրվա մեջը գնաց իրենց երկիրը ու փող վերցնելով եկավ էլի նրանց մոտ: Նորից սկսեց քեֆ անել: Նրանք զարմացան, թե էսպես շուտ ինչպես գնաց իրենց երկիրը ու եկավ: Այս բանը մի քանի անգամ կրկնվեց: Աղջկերքը զարմացան, թե էսքան փողը դրան որտեղից է. նա հայտնեց գաղտնիքը: Թաքավորի աղջկերքը նրա ձեռից խլեցին այն քսակը, երբ սաստիկ հարբեց նա և ձգեցին փողոց: Այս կերպով խլեցին և շվին, իսկ շալվարը, այսպես պատահեց. մի անգամ նա հագավ շալվարը ու ներս մտավ նրանց տունը ճաշի ժամանակ: Երբ իրենք հաց էին բերում, նա հափշտակում էր ու ուտում: Նրանք մնում էին զարմացած. վերջապես նկատեցին և բռնեցին. նա սրա գաղտնիքը ևս խոստովանեց: Թաքավորի տղեն մնաց դատարկ ամեն բանից ու միտքը գրեց նրանցից ինադը հանել:

Գնաց իրանց տունը, բաղչից սև թուզ քաղեց, շորերը փոխեց ու տարավ նրանց երկիրը ծախելու: Ձմեռ էր, էս ժամանակ իհարկե զարմանալի էր թուզ գտնելը: Քաղալակով լիքը թուզը գլխին դրած թաքավորի պալատի մոտով անց կացավ ձեն տալով:

— Ա՛յ լավ թուզը, ա՛յ լավ թուզը:

Թաքավորը լսելով այս, ծառաներին հրամայեց կանչել նրան: Նա ներս մտավ ու սև թուզը ծախեց էժան գնով նրանց վրա ու վռագ-վռագ դուրս պրծավ փախավ: Թաքավորը, նրա կնիկը, աղջիկը կերան այդ թղից թե չէ, գլխների վրա կանգնեցին, էլ շկարացին վեր կենալ: Աշխարհքում ինչքան դժխառու կար՝ բերին. ոչ ոք շկարաց լավացնել նրանց: Անց կացավ մի ժամանակ, էս թաքավորի տղեն շորերը փոխեց, մի արկղի մեջ զանազան տեսակ դեղեր դրեց, ջշերի մեջ ածած. սիպտակ թղից էլ քաղեց մի քանի հատ ու կտրտելով շշի մեջ ածեց: Գնաց նրանց երկիրը ու փողոցներին միջով անց էր կենում, ձեն տալիս:



— Ման հեքիմ ա՛մ, ման հեքիմ ա՛մ :

Թաքավորի մարդիքը լսեցին այս ձենը թե չէ, իմաց ամին  
թաքավորին: Նա հրամայեց ներս կանչել: Նա ներս մտավ:

Թաքավորը հարցրեց.— Կարո՞ղ ես ինձ լավացնել:

— Կարող եմ,— պատասխանեց նա:

— Ի՞նչ կանես:

— Ոչինչ,— պատասխանեց նա:

Թաքավորը ասեց.— Եթե շկարողանաս լավացնի, գլուխդ կրտ-  
րել կտամ. ինչքան դոխտուրներ են էկել, չեն կարացել լավացնել,  
ներանց բոլորի դիւնները ևս կտրել եմ տվել:

Նա խոստացավ, որ մի շաբաթվա մեջ կլավացնի: Առաջ թա-  
քավորին սկսեց դեղ տալ. նրան հասարակ դեղեր էր տալիս. վեր-  
ջապես մի բանի օր սոնցնելուց հետո, սիպտակ թղից տվեց՝ թա-  
քավորը վեր կացավ կանգնեց ոտի վրա ու ջնորհակալութուն  
հայտնեց նրան: Սրանից հետո էլ նրա կնոջը լավացրեց: Ամենքից  
վերջը՝ նրա աղջկան: Սորան առողջացնելիս նա պահանջեց, որ  
սլալատում ոչ ոք չմնա. նրա հիվանդութունը այնպիսի հիվանդու-  
թյուն է, որ ևթև նրա մոտ մարդ լինի անկարելի է նրան լավաց-  
նել: Հնարները ինչ, պիտի նրան լսեին: Պալատում ոչ ոք չկար:  
Նա գնաց աղջկա մոտ, ճիպոտով նրան այնքան տվեց<sup>2</sup>, որ հալից  
ընկավ. նա իր բաներն էր պահանջում: Բայց նա ուրանում էր  
վերջապես շատ ծեծելուց նա խոստովանեց, ասեց տեղերը այն բո-  
լորի և երբ բոլորը ստացավ, նա հարցրեց.

— Որ լավացնեմ քեզ, ինձ կառնե՞ս, որովհետև այդպես ենք  
բարշել հորդ հետ:

Նա ևրդվեց, որ կառնի նրան, եթև լավացնի իրան: Էդ ժամա-  
նակ նա սիպտակ թղից ավեց նրան, նա կերավ ու վեր կացավ,  
փաթթվեց նրա ճտովը: Թաքավորն ու նրա կնիկը շատ ուրախացան  
ու ինչպես խոստացել էին՝ իրենց աղջիկը պսակեցին նրա վրա.  
Օխտն օր, օխտը զիշեր հարսանիք էլավ, կերան, խմեցին, քեֆ  
արեցին: Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր մուրազին  
հասնեք: Հետո նա իր մորը գնաց բերեց ու իրար հետ լավ կյանք  
անց կացրին: Աստվածանից իրեք խնձոր վեր ընկավ՝ մինն ինձ,  
մինը՝ Տիգրանին<sup>3</sup>, մինը պատմողին:

<sup>1</sup> Ես բժիշկ եմ (Մ. Բ.):

<sup>2</sup> Փակադժում գրված է՝ ոտոզգի տվեց (Մ. Կ.):

<sup>3</sup> Հավանաբար Տ. նավասարդյանդին է վերաբերում ակնարկը (Մ. Կ.):